ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

27.01.2015թ.
237-ի 9

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Հովհաննես Մանուկյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մանուկյան,

Մեզ է դիմել "Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա" ՀԿ-ն (ՀԵԻԱ) եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: 20.12.2014թ. թվագրված գրությամբ "Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա" ՀԿ-ն դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե

1. 2015-2018թ.թ. Հակակոռուպցիոն ռազմավարության նախագծում ՀԵԻԱ եւ ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից ներկայացված ո՞ր առաջարկություններն են ընդունվել, եւ նախագծի ու 2015-2018թ.թ. միջոցառումների ծրագրի ո՞ր դրույթներում են դրանք ամրագրվել,
2. ՀԵԻԱ եւ ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից ներկայացված ո՞ր առաջարկությունները չեն ընդունվել եւ ի՞նչ պատճառաբանությամբ չեն ներառվել նախագծում եւ ծրագրում:

ՀԵԻԱ-ն մինչ օրս ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխան չի ստացել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում եմ "Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա" ՀԿ-ի՝ 20.12.2014թ.-ի հարցման պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան